ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ / / Կ.ԲՐՈՒՏՅԱՆ

ԴՐԱԽՏԻԿ-2022

2020-2022 ուսումնական տարում տնօրենի՝ուսումնական աշխատանքների գծով տեղակալի պարտականություններս իրականացրել եմ առաջնորդվելով Դրախտիկի միջնակարգ դպրոցի կանոնադրության 76-րդ կետի ինձ վերապահված պահանջներով:

Հիմք ընդունելով Դրախտիկի միջնակարգ դպրոցի հեռահար զարգացման ծրագիրն ու 2021-2022 ուստարվա ընդհանուր աշխատանքային պլանը , ուսումնական տարվա սկզբին կազմել, մանկխորհում քննարկել և տնօրենի հաստատմանն եմ ներկայացրել տարեկան աշխատանքային պլան հաշվի առնելով անցած ուսումնական տարվա խնդիրները և տարեվերջյան մեթոդմիավորումների նիստերի քննարկումները :

ՈՒսումնական տարվա գործունեությունս իրականացրել եմ ղեկավարվելով հիշյալ աշխատանքային պլանով: 2021-2022 ուստարվա սկզբին դպրոցում սովորողների ընդհանուր թիվը կազմել է 173 աշակերտ, ավարտին՝ 173: ՈՒստարվա սկզբին 10-րդ դասարան են դիմել 12 աշակերտ ,որոնցից 12-ը նույն դպրոցի 9-րդ դասարանն ավարտածներն են:Նման ընդունելությունը հնարավորություն է տվել ձևավորել 1(մեկ) դասարան:

Օգոստոսի 20-25-ը ընկած ժամանակահատվածում, սահմանված կարգով,կազմակերպվել և անց է կացվել տարեկան առարկաներից անբավարար գնահատված ու ամառային առաջադրանք ստացած աշակերտից վերաքննության ընդունումը և փոխադրման ձևակերպումը:

Օգոստոսի 20-30-ը,հաշվի առնելով հունիսյան նախնական կոմպլեկտավորումն ու դասաբաշխումը և 10-րդ դասարանում կատարված ընդունելությունը նախապատրաստել և մանկավարժական խորհրդի նիստի քննարկմանն եմ ներկայացրել Դրախտիկի միջնակարգ դպրոցի 2021-2022 ուստարվա ՈՒսումնական Պլանը,սահմանված կարգով կատարել ԴՊ բաղադրիչի բաշխումը, առարկայական մասնախմբերի նիստերում իրականացրել դասաբաշխումը,մասնակցել տարիֆիկացիայի կազմմանը:

2021-2022 ուստարվա տարեկան առաջադիմությունը Դրախտիկի միջնակարգ դպրոցում կազմել է 99% նախորդ ուստարվա 100%-ի փոխարեն, իսկ որակը՝ 32% (նախորդում՝ 20/31%): Դարձյալ սովորողների մեջ գերակշիռ թիվ են կազմում նվազագույն՝ Ա մա կարդակով սովորողները: Մտահոգիչ է 11-12րդ դասարաններում սովորող 25 աշակերտների մեջ գե բազանցիկների բացակայությունը, ինչը խորանալու միտում ունի և բացասական ազդեցություն կունենա դպրոցի ընդհանուր վարկանիշի վրա :

Անցած ուսումնական տարում մինչև մայիսի 8-ը ընկած ժամանակահատվածում 120-200 դասաժամ բացակայած աշակերտ չի եղել :

2021-2022 ուստարվա 8 շրջանավարտներից ավարտական և միասնական քննություններ են հանձնել համապատասխանաբար.

Հայոց լեզու և հայ գրականություն-8 աշ.

Մաթեմատիկա-8 աշ.

Հայոց պատմություն-8 աշ.

Ավարտական քննություններ հանձնած 12-րդ դասարանի 8 շրջանավարտներից ,բոլորն էլ ստացել են 8-20 միավոր և ավարտել դպրոցն: Հայոց լեզվից տարեկան միջին գնահատականի և հայոց լեզու և հայ գրականություն միասնական քննությանը դպրոցից մասնակիցների ստացած միջին գնահատականի տարբերությունը հանրապետական միջին գնահատականին հավասար է:

Մաթեմատիկայից տարեկան միջին գնահատականի և մաթեմատիկայի միասնական քննությանը ,դպրոցից մասնակիցների ստացած միջին գնահատականի տարբերությունը հանրապետականի միջինից բարձր է:9-րդ դասարանի բոլոր 12 աշակերտներին թույլատրվել է մասնակցել քննություններին ,որոնք բոլորն էլ հաղթահարել են դրական շեմը:

Ելնելով ուսպլանի պահանջներից և դասաբաշխման հնարավորություններից, իրականացրել եմ առաջին և երկրորդ կիսամյակների դասացուցակի կազմման և հետագա սպասարկման աշխատանքները:

Սահմանված կարգով ըստ կիսամյակների մշակել եմ ուսուցիչների աշխատաժամանակի բեռնվածությունը՝ելնելով նրանց շաբաթական ժամաքանակի ծանրաբեռնվածությունից ու դրա հիման վրա կատարել ամենօրյա հաշվառում:Իրականացրած հաշվառման հիման վրա համապատասխան մատյանում կատարել եմ բաց թողած և փոխարինված դասաժամի արձանագրում: 2021-2022 ուստարվա ընթացքում 7-12-րդ դասարաններում նախատեսված ժամաքանակը կազմում է 24990 դասաժամ,որից ուսումնական տարվա ընթացքում ոչ աշխատանքային հայտարարված չորս օրերին բաժին է հասնում.

ա.Հունվարի 28՝ 150 ժամ

բ.Մարտի 8 ՝ 147 ժամ

գ. Մայիսի1- 147 ժամ

դ. Մայիսի 9՝ - 147 ժամ

Փաստացի նախատեսված ժամաքանակի կատարողականը 24 546 դասաժամ է ,թերակատարում չկա:

ՈՒստարվա ընթացքում համակարգել և վերահսկել եմ առարկայական մասնախմբերի գործունեությունը ,մասնակցել նրանց աշխատանքային պլանների կազմմանը և օժանդակել ամենամսյա նիստերի գումարմանը: Օգոստոսին կազմվել են չորս մեթոդական միավորումներ.հայոց լեզվի և օտար լեզուների և բնագիտամաթեմատիկական առարկաների , սահմանված կարգով կատարվել նրանց նախագահների նշանակում և նիստերի արձանագրության քարտուղարների ընտրություն: Յուրաքանչյուր կիսամյակի սկզբի մ/մ նախագահների հետ ուսումնասիրել, քննարկել և հաստատել եմ առարկայական թեմատիկ պլանները հետևել դրանց կատարմանը:

ՈՒստարվա ընթացքում նախատեսվել և իրականացվել են մրջոցառումներ նպատակամղված դասի արդյունավետության բարձրացմանը,սովորողների գիտելիքների որակի բարելավմանը,նրանց կարողությունների և հմտությունների զարգացմանը ,կազմակերպեցի առարկայական օրեր ու շաբաթներ, ու բաց դասեր, դասմիջոցառումներ, տնօ ռենության կողմից տրվող գրավոր աշխատանքներ ու կատարվել քննարկումներ:

Ելնելով չափորոշչային պահանջներից, ուսպլանով հատկացված շաբաթական ժամաքանակից և առարկայական ծրագրային պահանջներից, ըստ առարկաների կազմել ու վերահսկել եմ միավորային գնահատման բանավոր, գործնական և գրավոր

բաղադրիչների նվազագույն քանակները,որոնց ուղղությամբ առանձնակի շեղումներ չեն արձանագրվել:

Նախապատրաստել , կազմակերպել ու անց են կացվել դպրոցականների առարկայական օլիմպիադաները,փուլ առ փուլ դրանց արդյունքները քննարկվել են մ/մ և մ/խ,ծ/խ և աշկոմի նիստերում,կատարվել հետևություններ:Աշարերտների մեծ ընդգրկվածությամբ ապահովվել է դպրոցական փուլի մասնայկանությունը.,որոնցից 3-ը արժանանալով մրցանակային տեղերի իրանունք ստացան մասնակցել հաջորդ՝մարզային փուլին : Օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցելու իրավունք չստացան : Հարկ կա սակայն մաթեմատիկա,ֆիզիկա,ինֆորմատիկա առարկաների ուսուցիչների ուշադրությունը հրավիրել տարիներ շարունակ կրկնվող ոչ բարձր օլիմպիական ցուցանիշների մասին:

Դեկտեմբեր-հունվար ամիսներին նախապատրաստել և կազմակերպել եմ 12-րդ դասարանների ուսումնական գործընթացը:Այդ նպատակով,հաշվի առնելով սովորողների նախասիրությունները, խմբավորել եմ աշակերտներին ըստ օտար լեզուների և բնագիտական առարկաների,կազմել անհատական և խմբային ուսուցման ժամանակացույց, հրահանգավորել ուսուցիչներին և դասղեկներին դրանցով աշխատելու եղանակների մասին:Ճշտվել են II կիսամյակում ուսումնասիրվող առարկաների ժամաքանակը ,քննարկվել,ստուգվել և մ/մ նիստերում հաստատվել են 2-րդ կիսամյակում 12-րդ դասարանում ուսուցանվող առարկաների թեմատիկ պլանները, ճշտվել կիրառվող գնահատման բաղադրիչները, բանավոր, գրավոր և գործնական աշխատանքների նվազագույն քանակներն ու բնույթը:

ՈՒստարվա ընթացքում պարբերաբար վերահսկել եմ ուսուցիչների աշխատանքային գործունեությունը՝ համաձայն ըստ դասացուցակի և դասաբաշխման կազմված աշխատակարգի,դրանց հիման վրա կատարել ուսուցիչների ամենօրյա հաշվառում: Որոշակի պարբերությամբ ստուգվել են օրվա դասի պլանները՝հաշվի առնելով չափորփշչային ու արդի մանկավարժության պահանջները,համադրել դրանք առարկայական թեմատիկ պլաններին,դասալսումներին հետևել, թե որքանով է ուսուցիչը պահպանում դրանց պահանջները ու ինչ հմտությամբ է կարողանում դրանք փոփոխել՝ելնելով դասապրոցեսում ծագած խնդիրներից ու իրավիճակներից:

Մարտ ամսվա ընթացքում կատարել եմ ավարտական,միասնական և կենտրոնացված պետական քննություններ հանձնող 2սովորողների հայտագրում և շրջանավարտների հայտ-ցուցակների կազմում,իսկ ապրիլին՝ստուգել ու ճշգրտել դրանք:

Մ/Խ և մ/մ մայիսյան նիստերում,մինչև մայիսի 22-ը համատեղ գումարված աշակերտական և ծնողական ժողովներում լուսաբանվել են 2021-2022 ուստարվա փոխադրման, ավարտման և քննական կարգը,քննությունների և նախաքննական կոնսուլտացիաների աշխատակարգը:

Կիսամյակների և ուստարվա ավարտին կատարել եմ ուսումնական արդյունքների ամփոփում և մ/խ նիստերում հանդես եկել դրանց վերլուծություններով:

Ուստարվա ավարտին աջակցել եմ 12-րդ դասարանի դասղեկին,ավարտական փաստաթղթերի լրացմանը:

ՈՒստարվա ավարտին կազմել եմ 2022-2023 ուստարվա նախնական ուսումնական պլան և դասաբաշխում,տարեվերջյան մ/խ նիստում հանդես եկել սույն հաշվետվությամբ:

Կատարված աշխատանքների կողքին կան նաև որոշակի բացթողումներ,որոնց մի մասը կային նաև նախորդ ուսումնական տարում:Մանկավարժական խորհրդի և ընդհանրապես մանկավարժների ուշադրությունն եմ հրավիրում հետևյալ կետերի վրա.

1 .Կրթական չափորոշչային միջին և առավելագույն մակարդակներով սովորող աշակերտների սակավություն,ուսման արդյունավետության և որակի ոչ բարձր մակարդակ,

2.Աշակերտների մոտ ուսման և հատկապես ոչ հոսքային առարկաների նկատմամբ անլիարժեք վերաբերմունք,

3. Համաձայն ուսպլանի պահանջների, առանձին առարկաներից SS կիրառման ոչ պարբերականություն և ոչ բոլոր ուսուցիչների ու դասարանների ընդգրկվածություն,

4.Դասապրոցեսի համար համակարգչային կաբինետի կահավորվածության և տեխնիկական հագեցվածության խնդիրներ,

5.Կահավորված ՆԶՊ կաբինետի,հագեցած և քիմիայի լաբորատորիաների բացակայություն,

6.Առանձին դասապրոցեսների վատ դիտակտիկ և տեխնիկական հագեցվածություն,

7.Առանձին առարկաներից օլիմպիադաներում ցուցաբերած ոչ բարձր արդյունքներ,

Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝ /Կ.Բրուտյան/

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԴՐԱԽՏԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
ՏՆՕՐԵՆ.....Ն.Բաբաքյոխյան
..30..օգոստոս 2022թ.